

Մինքլեր Լուիսի ստեղծագործություններում կիրառված ոճական հնարները և դրանց հայերեն թարգմանության խնդիրները

*Հոդվածը նվիրված է ամերիկացի գրող, քննադատական
ռեպրիզանտի ներկայացուցիչ Մինքլեր Լուիսի ստեղծագործու-
թյուններում առավել հաճախ հանդիպող ոճական հնարնե-
րին և դրանց հայերեն թարգմանության խնդիրներին: Ման-
րամասն և օրինակներով տրվում են Լուիսի կիրառած
ոճական հնարներն առանձին– առանձին, բերվում են այդ
օրինակների հայերեն թարգմանությունների ամենահավա-
նական տարբերակները: Փորձ է արվում տալ թարգմանա-
կան այնպիսի տարբերակներ, որ հեղինակի ստեղծած
ոճական պատկերները չսուժեն:*

*Բանալի բառեր. Մինքլեր Լուիս, ոճական հնար, թարգմա-
նական տարբերակ, գեղարվեստական ստեղծագործու-
թյուն, լեզվատոճական արտահայտչամիջոց:*

«Պրն Սինքլեր Լուիսը, ինչպես Հ. Լ. Մենկենը, պարադոքս է այսօրվա Միացյալ Նահանգներում»,– գրում է ամերիկացի գրող և քաղաքական գործիչ Ռոբերտ Մորս Լովերը (Lewis 1962:32): Եվ իրոք, գրականագիտության և գրաքննադատության ասպարեզներում իրարամերժ արձագանքներ գտած այս հեղինակը՝ Սինքլեր Լուիսը, հակասությունների ամբողջություն է, հակասություններ, որ ներառում են ինչպես նրա աշխարհայացքն ու գրական նախասիրությունները, այնպես էլ լեզվաոճական արտահայտչամիջոցների ընտրանին, որոնցով Լուիս-հեղինակը կերտում է միայն իրեն բնորոշ կերպարա-սյուժետային համակարգեր:

«Ոճը մտքի զգեստն է»,– պնդում է Լորդ Չեսթրֆիլդը՝ բրիտանացի պետական գործիչ եւ նամակագրության վարպետ (Կույումջյան 2005:185): Չկա այնպիսի գրող, որ չունենա իր ուրույն ոճը, նմանապես չկա և մի այնպիսի գրական ստեղծագործություն, որ չստեղավորվի որևէ ոճի շրջանակներում:

Թերևս ոչ մի գործառական ոճ այնքան հարուստ չէ ոճական հնարներով ու արտահայտչամիջոցներով, ինչպես գեղարվեստական ոճը: Սրանք էլ հենց կազմում են այդ ոճի առանցքն ու պատկերայնության գաղտնիքը, օգնում իրականացնելու նրա կարևորագույն՝ ներգործության գործառույթը (Գասպարյան 2011: 80): Ոճաբան Գալպերինը ոճական հնարներ և արտահայտչամիջոցներ է անվանում լեզվի այն հատուկ միջոցները, որոնք օգնում են ստանալ խոսքի որևէ էֆեկտ (Galperin 1977:9): Այդ նույն հեղինակը անհա-

տական ոճ է անվանում լեզվական միջոցների, արտահայտչամիջոցների և ոճական հնարների այն համակցումը, որ բնորոշ է որևէ գրողի (Galperin 1977 :17):

Իբրև ինքնատիպ մի գրող՝ Մինքլեր Լուիսն իր ստեղծագործությունները համեմուտ է ոճական հնարների և արտահայտչամիջոցների մի իսկական աստղաբույլով, որոնք նպաստում են Լուիս-հեղինակի՝ իբրև գրողի անհատական ոճի կայացմանը: Ոճական այդ հնարները, գումարվելով հեղինակի կիրառած բառապաշարային եւ քերականական հնարների ողջ բազմությունը, իրենց հերթին նպաստում են լուիսյան կերպարների լավագույնս կերտմանն ու բացահայտմանը: Ոճական որոշ հնարներ այնքան դիպուկ են և կոնտեքստային, որ կարող են իսկական գլուխկոտրուկ դառնալ Լուիսի ստեղծագործությունները հայերեն թարգմանել փորձող գրականագետի համար:

Ստորև փորձենք քննել Մինքլեր Լուիսի լեզվում առավել հաճախ հանդիպող ոճական հնարները՝ միաժամանակ փորձելով տալ դրանց հայերեն թարգմանության ամենամոտ տարբերակները:

1) Լուիսի լեզուն համեմված է մակդիրների (epithet) բազմաթիվ օրինակներով: Մակդիրներն առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչներն են (Պոդոյան 1991:44): Մրանք սովորական որոշիչներից տարբերվում են արտահայտչականությամբ, հուզական կամ պատկերավոր բնույթ ունեն (Ջահուկյան 1976 :57):

...Never (was) an August evening more moonwashed and specious and proper for respectable romance (Lewis 1972 :9).

Դեռ երբեք օգոստոսյան երեկոն այնպես ողողված չէր լուսնով և հատուկ ու հարմար հարգալից սիրավեպի համար:

Վերոբերյալ օրինակում Լուիսը գեղեցիկ մակդիրով նախապատրաստում է ընթերցողին հերոսների հանդիպման տեսարանին: Նրա խոսքերով՝ «երեկոն ողողված է լուսնի լույսով», որ երբևէ այդպես պայծառ ու տրամադրող չէր եղել: Ասես բնությունն ինքն էլ է նպաստում գեղեցիկ սիրավեպի կայացմանը:

2) Լուիսը բավականին վարպետորեն օգտվում է նաև փոխանունություն (metonymy) կոչվող ոճական հնարից, թեպետ ոչ այնքան հաճախ, ինչպես մակդիրներից է օգտվում: Փոխանունությունը հենվում է երկու հասկացությունների իրար կապող զուգորդման վրա (Galperin 1977 :144): Այլ խոսքերով՝ սա մի ոճական հնար է, որի դեպքում մի բառը օգտագործվում է մեկ այլ բառի փոխարեն, որ զուգորդվում է դրա հետ (Կույումջյան 2005:177):

And he saw as pitiful the fact that Fran expected to find youth again merely by changing skies (Lewis 1972 :48).

Եվ նա ցավով էր ընդունում այն փաստը, որ Ֆրանն ակնկալում էր վերագտնել երիտասարդությունը՝ պարզապես փոխելով երկինքները:

Փոխարենը նշելու, որ հերոսուհին փոխում է երկիրը, տեղից տեղ է փոխադրվում իր երիտասարդությունը վերագտնելու համար, հեղինակը նշում է, որ Ֆրանն այդ անելու համար փոխում է երկինքները: «Երկինք» բառն այստեղ գործածվում է «երկիր» բառի փոխարեն, ինչն էլ ավելի գեղեցիկ ու պատկերավոր է դարձնում նկարագրվող տեսարանը: Հետաքրքիր է և այն, որ «երկինք» բառն էլ ավելի է ընդգծում նրա կատարած քայլը՝ ասես մեծացնելով այն տարածությունը, որ ընկած է լինելու նրա հայրենիքի և այն երկրի միջև, ուր որ պատրաստվում է մեկնել: Թարգմանելիս նախընտրեցինք *changing skies* արտահայտությունը թարգմանել բառացի՝ Լուիսի կերտած փոխանունությունը լավագույնս պահպանելու նպատակով:

3) Շրջասույթը (allusion) անուղղակի անդրադարձն է պատմական, գրական, առասպելական, բիրիական կամ նմանատիպ այլ անձանց, առարկաների ու վայրերի: Լուիսի մոտ այն գտնում է բավականին հետաքրքիր դրսևորումներ:

If Paul was dangerous, if Zilla was a snake – looked
fury...it was Babbitt who was the most formidable
(Lewis 1962 :161).

*Եթե Փոլը վտանգավոր էր, եթե Զիլլան օձակերպ
փեղի էր... սպա Բեբիթն էր նա, ով ամենաա-
հարկուն էր:*

Վերոբերյալ օրինակում Զիլլան՝ Փոլի կինը, համեմատվում է հունական դիցարանի կերպարներից մեկի՝ Մեդուզայի հետ: Վերջինս անասելի սոգեղ մի կին էր, ում գլ-

խին մազերի փոխարեն օձեր էին աճում: Մեղուզային նայողը սարսափից քարանում էր: Հնարավոր է արդյոք ավելի պատկերավոր նկարագրել հերոսուհու տգեղությունը, քան այն դիպուկ համեմատությամբ, որ արել է Լուիսը: Փոխարենը մի քանի տողով, հազար ու մի բառերով նկարագրելու Զիլլայի արտաքինը, նա այդ անում է ընդամենը մեկ արտահայտությամբ՝ անդրադարձ կատարելով օձագլուխ փերուն: Արդյունքում ստացվում է ավելի տպավորիչ ու տեսանելի պատկեր, քան եթե այդ արվեր սովորական նկարագրությամբ:

4) Ոճաբանության մեջ տարածված հնար է համարվում կրկնությունը: Կարող են հանդիպել բառերի, արտահայտությունների, առանձին կառույցների եւ նույնիսկ ամբողջական նախադասությունների կրկնություններ (Կուլյումջյան 2005:183): Յուրաքանչյուր դեպքում գործ ունենք կրկնության մի առանձին տեսակի հետ:

Լուիսի մոտ բավականին հաճախ է հանդիպում անաֆորան (anaphora)՝ բառի կամ արտահայտության կրկնությունը հաջորդական կառույցների, նախադասությունների կամ քառատողերի սկզբում:

Furiously he snatched up his tube of shaving-cream, furiously he lathered, with a belligerent slapping of the unctuous brush, furiously he raked his plump cleeks with a safety-razor (Lewis 1962: 31).

Նա կատաղաբար հափշտակեց իր սափրամածուկի պարկուճը, կատաղաբար փրփրեցրեց յուղոտ խոզանակի պատերազմող հարվածներով,

*կատաղաբար փոցիւեց իր պարարտ այտերը
պաշտպանիչ ածելիով:*

"Furiously"՝ «կատաղի» բառի կրկնությունը բերված օրինակում ինքնանպատակ չէ: Այն դնելով բարդ նախադասության մաս կազմող յուրաքանչյուր պարզ նախադասության սկզբում՝ Լուիսն ամեն անգամ նորովի է շեշտում այն փաստը, որ հերոսն իր գործողությունները կատարում է ցասման մեջ:

5) Լուիսի մոտ հանդիպում է նաև բուն կրկնություն ոճական հնարը: Այս դեպքում կրկնվող բառերը հանդիպում են ոչ թե առանձին նախադասությունների կամ կառույցների սկզբում, այլ կողք կողքի, մի նախադասության մեջ:

Then something like an acre of little table with typists and typists and typists, very busy, and clerks and clerks and clerks, with rattling papers...(Lewis 1962 :368)

*Հետո մի ակրի չափ սեղանի պես մի բան՝ անչափ
գրադված տպագրիչներով, տպագրիչներով ու
տպագրիչներով, և կլերկներով, կլերկներով ու
կլերկներով՝ շատաչող թղթերով...*

Այս դեպքում միևնույն բառի մի քանի անգամյա կրկնությամբ հեղինակը ցույց է տալիս, որ նշված անձինք՝ տպագրիչներն ու գրասենյակային կատարածուները՝ կլերկները, չափազանց շատ են: Ոճական այս գեղեցիկ հնարով հեղինակը կարողանում է շատության ավելի մեծ աստիճանի հասնել, քան եթե այդ աներ հենց «շատ» բառի

օգնությամբ: Ասես շուրջբոլորը, որ կողմ էլ որ նայում ես, տպագրիչներ ու կատարածուներ են:

6) Այդուհանդերձ, կրկնության տեսակներից Մինքլեր Լուիսի մոտ առավել գործածական է էպիֆորը (epiphora)՝ բառի կամ արտահայտության կրկնությունը կառույցների, նախադասությունների կամ քառաստողերի վերջում (Կուլումջյան 2005:167):

She was a good woman, a kind woman, and a diligent woman... (Lewis 1962 :33)

Նա լավ կին էր, բարի կին էր, ջանասեր կին էր...

Բերված օրինակում հեղինակը և՛ ընդգծում է ասածը, ամեն անգամ նորովի շեշտում, և՛ վերջադիր կրկնությունների օգնությամբ կերտում մի տեսակ երգեցիկ պատկեր:

7) Անձնավորումը (personification) ոճական մի հնար է, որի դեպքում առարկաներին կամ բնության երևույթներին տրվում են անձին բնորոշ հատկանիշներ: Լուիսի մոտ ոճական այս հնարը ստանում է բավականին հետաքրքիր դրսևորումներ:

She realized that these Minnesota country roads had no respect for her polite experience on Long Island parkways (Lewis 1919 : 2).

Նա հասկացավ, որ Մինեսոտայի այս գյուղական ճանապարհները հարգանք չունեն Լոնգ Այլնդի ծառուղիներում նրա քաղաքավարի արտաքինի նկատմամբ:

Crows loitered and gossiped in the sky (Lewis 2002: 43).

Ագռավները զվոնում էին և բամբասում երկնքում:

Փորձենք ասածը մեկնաբանել առաջին օրինակի հիման վրա: Պարզ է, որ ճանապարհը չի կարող ինչ-որ մեկին հարգել կամ չհարգել: Բայց հերոսուհին այնքան միայնակ է ու չհասկացված, այնքան չհարգված շրջապատողների կողմից, որ ստիպված է շնչավորել անկենդան ճանապարհին ու հարգանք պահանջել նրանից: Ապա դարձյալ հուսալքվում է՝ հասկանալով, որ ճանապարհը ևս չի հարգում իրեն: Փաստորեն, շրջապատող աշխարհում նա միայնակ է, մերժված և օտար:

8) Սինքլեր Լուիսը սիրում է օգտվել համեմատություն (simile) կոչվող ռճական հնարից: Սա այն դեպքն է, երբ համեմատվող տարրերն իրար կապակցվում են իբրև, ինչպես (like, as) բառերով:

...Any respectable living-room was as shiny and as impersonal as a new safety-razor blade (Lewis 1972: 70).

Ցանկացած հարգարժան հյուրասենյակ այնքան փայլուն էր ու անտարբեր, որքան անվտանգ ածելիի սայրը:

I'll be as impersonal as cold boiled potatoes (Lewis 2002:74).

Ես կլինեմ նույնքան անտարբեր, ինչպես սառը, եփած կարտոֆիլները:

Բերված օրինակներում հեղինակին հաջողվում է անհավանական ու անսպասելի համեմատություններով հասնել տպավորիչ արդյունքի: Վերջին օրինակում, օրինակ, հերոսուհին նշում է, որ պատրաստ է լինել «այնքան անմարդկային, որքան սառը, եփված կարտոֆիլները»: Ի՞նչը

կարող է լինել ավելի անսիրտ, անշունչ ու անկենդան, քան սովորական կարտոֆիլները: Եվ հերոսուհին պատրաստ է լինել այդպիսին՝ հոգնած իր չհասկացված կենսակերպից:

9) Մինքլեր Լուիսի մոտ քիչ չեն նաև աստիճանավորման դեպքերը: Ոճական այս հնարով հեղինակը վարպետորեն ընդգծում է իր ասելիքը՝ գնալով իմաստի աստիճանական ուժեղացման (Ջահուկյան 1976: 72):

The towers of Zenith aspired above the morning mist;
austere towers of steel and cement and limestone...
(Lewis 1962: 27)

Ջենիթի աշտարակները ձգտում էին առավոտյան մշուշից վեր՝ դաժան աշտարակները՝ պողպատե, բետոնե և կրաքարե...

Babbitt was immensely conscious in the sway and authoritative clatter of the train, of going, of going on
(Lewis 1962:165).

Բեբիթը մեծապես գիտակցում էր ճոճքն ու հեղինակավոր չխչխկոցը գնացքի, գնալու, առաջ գնալու:

Առաջին օրինակում մեր առջև հառնում է Ջենիթ քաղաքի սառն ու խիստ պատկերը: Այդ խստությունն էլ ավելի է սաստկանում՝ շնորհիվ ոճական այն հնարի, որ կիրառել է Լուիսը: Նա հերթով կարծրացնում է շինանյութի այն տեսակը, որով կառուցվում են քաղաքի աշտարակները: Արդյունքում մենք մտովի պատկերացնում ենք այն վայրը, ուր ծավալվելու են վեպում նկարագրվող գործողությունները՝ նախապատրաստվելով ականատես լինելու նրա՝ նույնչափ սառն ու անկյանք հերոսների կենսակերպին:

Երկրորդ օրինակում բառիմաստի աստիճանական ուժեղացմամբ հեղինակը ստեղծում է շարժման տեսարան: Երկու դեպքում էլ թարգմանելիս ձգտել ենք ստեղծել համանման պատկեր:

10) Լուիսը սիրում է կիրառել նաև հակադրման տեխնիկան, երբ երկու հակառակ բևեռներ բերվում են միասին ու ստեղծում ամբողջի պատկեր (Ջահուկյան 1976 : 73):

To George F. Babbitt, as to most prosperous citizens of Zenith, his motor car was poetry and tragedy, love and heroism (Lewis 1962 : 50).

Ջորջ Ֆ. Բեբիթի համար, ինչպես Ջենիթի շատ քաղաքացիների համար, իր մեքենան պոեզիա էր ու ողբերգություն, սեր և հերոսություն:

Այս դեպքում, ցանկանալով էլ ավելի ընդգծել Ջորջ Բեբիթի նյութապաշտությունը, Սինքլեր Լուիսը դիմում է հակադրման հնարին: Նա նշում է, որ Բեբիթի համար սեփական մեքենան և՛ պոեզիա է, և՛ ողբերգություն, և՛ սեր, և՛ հերոսություն, մի խոսքով՝ ամեն ինչ: Հենց այդ «ամեն ինչի» գաղափարին էլ հասնում է հեղինակը՝ շնորհիվ այն փաստի, որ համադրում է ծայրահեղ բևեռներ:

11) Գեղարվեստական ստեղծագործություններում չափազանց տարածված ոճական հնար է չափազանցությունը (hyperbole): Սա որևէ առարկայի կամ հասկացության բնորոշ հատկանիշի նպատակային չափազանցումն է՝ այդ հատկանիշն առավել ընդգծելու նպատակով (Galperin 1977 : 176): Սինքլեր Լուիսի վեպերում քիչ չեն ոճական այս հնարի օրինակները, որոնցով հեղինակն ընդգծում է իր հերոս-

ներին կամ նրանց շրջապատող միջավայրին բնորոշ որևէ հատկանիշ:

It was an apartment for giants to live in (Lewis 1972 : 320).

Դա մի բնակարան էր՝ նախատեսված հսկաների համար:

He is a fairy. When I'm out of the mud he'll turn his raincoat into a pair of lordly white wings, and vanish (Lewis 1919: 30) .

Նա փերի է: Երբ ես դուրս գամ ցեխից, նա իր անձրևանոցը կդարձնի մի գույգ աստվածային ճերմակ թևեր ու կանհետանա:

Մի դեպքում հեղինակն ընդգծում է Դոդավորթների բնակարանի անասելի մեծությունը՝ այն համեմատելով հսկաների տան հետ: Երկրորդ դեպքում, կամենալով ընդգծել Միլթ Դագերթի բարությունը, նրան համեմատում է փերու հետ, ով հայտնվում է ճիշտ պահին, անում իր բարի գործն ու ասես անհետանում՝ շնորհիվ ճերմակ թևերի: Հասկանալի է, որ նշված օրինակներից և ոչ մեկում էլ իրերն ու մարդիկ բառացիորեն այնպիսին չեն, ինչպիսին որ նրանց ներկայացնում է Լուիսը: Այդուհանդերձ, ընթերցողը հասկանում է, որ հեղինակը նկատի ունի սոսկ նկարագրվող հատկանիշների մեծությունը, ինչին հասնում է՝ շնորհիվ «չափազանցություն» ոճական հնարի:

12) Լուիսը սիրում է իր ստեղծագործություններում ժամանակ առ ժամանակ օգտվել հասարակ գոյականների մեծատառով գրությունից՝ իբրև ուշադրությունը գրավելու

միջոց: Այդ դեպքերի մեծ մասն անվանափոխության օրինակներ են: Սա փոխակերպության մի տեսակ է, երբ հատուկ անունը հանդես է գալիս հասարակի, հասարակը՝ հատուկի, հատուկը՝ այլ հատուկի փոխարեն (Պոդոսյան 1991:58):

Littlefield was the Great Scholar of the neighborhood (Lewis 1962:51).

Լիթլֆիլդը շրջակայքի Մեծագույն Գիտնականն էր:

13) Լուիսի լեզուն հարուստ է փոխաբերության (metaphor) բազմաթիվ օրինակներով: Սա որոշակի որակի անցումն է մի առարկայից մյուսին: Կույումջյանն իր գրքում փոխաբերություն է անվանում ոճական այն հնարը, որ համեմատում է երկու առարկաներ՝ ասելով, թե մեկը մյուսն է (Կույումջյան 2005:174): Սա մի արտահայտչամիջոց է, որով Լուիս հեղինակը բավականին վարպետորեն ներկայացնում է իր հերոսին կամ որևէ իրադրություն:

The nearest heart of gold was presumably beating warmly in the house a quarter of a mile ahead (Lewis 1919:17).

Ամենամոտ ոսկյա սիրտը հավանաբար բարախում էր ջերմորեն քառորդ մղոն այն կողմ գտնվող տանը:

Հասկանալի է, որ սիրտը չի կարող ոսկյա լինել: Բայց շնորհիվ մետաֆորի կիրառման՝ հեղինակին հաջողվում է ընդգծել իր հերոսի անասելի բարությունը՝ միաժամանակ գեղազիտական հաճույք պարգևելով ընթերցողին:

14) Լուիսին խորթ և անծանոթ չէ նաև բառախաղի տեխնիկան:

It did not seem possible that two horses could pull out the car where seventy horsepower had fainted (Lewis 1919: 20).

Հավանական չէր թվում, որ երկու ձիերը կարող էին մեքենան դուրս բերել այնտեղից, որտեղ յոթանասուն ձիաուժը պարտություն էր կրել:

She was a woman with a working brain and no work (Lewis 2002:66).

Նա մի կին էր՝ աշխատող ուղեղով և առանց աշխատանքի:

Չնայած շնորհիվ գիտատեխնիկական հեղաշրջման՝ ձիերը՝ իբրև տրանսպորտի միջոց, փոխարինվեցին մեքենաներով, բայց մեքենայի հզորությունն այժմ էլ շարունակվում է չափվել ձիաուժերով: Այդ փաստը թույլ է տալիս Լուիսի նման վարպետ հեղինակին կերտել բառախաղի մի գեղեցիկ պատկեր՝ նշելով, որ «երկու ձին անգոր են անգամ տեղից շարժելու յոթանասուն ձիաուժը», այսինքն՝ մեքենան:

Երկրորդ օրինակում ոճական նույն հնարով հեղինակն ընդգծում է կյանքի անարդարության մի դրսևորում, երբ մարդու արժանիքներն ու ձեռքբերումները անհամապատասխան են լինում: Քլերը ևս կյանքի ու իր շրջապատող հասարակության զոհն է, քանզի մարդ է «աշխատող ուղեղով, բայց առանց աշխատանքի»:

15) Եվ վերջապես, իբրև հեգնանքի (irony) մեծ վարպետ՝ Լուիսը համեմուտ է իր ստեղծագործությունները դրա հազարավոր օրինակներով: Հիշեցման կարգով նշենք, որ հեգնանքը ոճական այն հնարն է, երբ ասվում է մի բան՝ նկատի ունենալով բոլորովին հակառակը (Կույումջյան 2005:172):

He ordered nothing but English mutton chop, radishes, peas, deepdish apple pie, a bit of cheese and a lot of coffee with cream, adding... French fried potatoes (Lewis 1962 :86).

Նա պատվիրեց ոչինչ, միայն՝ անգլիական ոչխարի կոտլետ, բողկեր, տանձեր, խորը ամանով խնձորի կարկանդակ, մի քիչ պանիր և շատ սուրճով սերուցք՝ ավելացրած... ֆրանսիական կարմեցրած կարտոֆիլ:

The great Samuel Dodsworth is sleepy! (Lewis 1972: 342)

Մեծն Սեմյուել Դոդսվորթը քնկոտ է:

Ասվածը մեկնաբանենք՝ հենվելով առաջին օրինակի վրա: Կամենալով ընդգծել հերոսուհիներից մեկի որկրամոլությունը՝ Լուիսը նշում է, որ նա պատվիրում է «ոչինչ» , միայն... ու թվարկում այնքան ուտելիք, որ կհագեցնեի մի քանի մարդու: Արդյունքում և՛ ընդգծվում է հերոսուհու ֆիզիկական արատի անասելի մեծությունը, և՛ թույլ է տալիս ընթերցողին ժպտալ՝ մտովի պատկերացնելով նկարագրվածը:

Այսպիսով, Սինքլեր Լուիսի լեզուն համեմված է ոճական գեղեցիկ հնարներով, որոնք գալիս են լրացնելու և նույնիսկ գերազանցելու լեզվի մյուս բաժինների թույլ տված հնարավորություններն ու կերտելու հետաքրքիր գրական կերպարներ: Հայերեն թարգմանելիս հարկ է առանձին ուշադրություն դարձնել լուիսյան ոճական հնարներին՝ հեղինակի ձեռագիրն ու անհատականությունը չկորցնելու նպատակով:

Գրականության ցանկ

1. Lewis, S. (1919) *Free Air* // New York /Grosset & Dunlap Publishers.
2. Lewis, S. (1962) *A collection of critical essays* //N. Y./ Englwood Cliffs.
3. Lewis, S. (1962) *Babbitt* // Moscow / Foreign Languages Publishing House.
4. Lewis, S. (1972) *Dodsworth* // New York / New American Library.
5. Lewis, S. (2002) *Main Street* //New York / New American Library.
6. Կուլյուժյան, Ս., Սեֆերյան, Ս. (2005) *Անգլերեն լեզվի ուսումնական ձեռնարկ* //Երևան /Սահակ Պարթև:
7. Պողոսյան, Պ. (1991) *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները* // Երևան / Երևանի համալսարանի հրատարակչություն:
8. Ջահուկյան, Գ., Խլղաթյան, Ֆ. (1976) *Հայոց լեզու* // Երևան /»Լույս« հրատարակչություն

Нарине Закарян
ЕГУ

**Стилические приемы в произведениях Синклера
Льюиса и проблемы их перевода
на армянский язык**

Статья посвящена стилическим приемам в произведениях американского писателя, представителя критического реализма Синклера Льюиса и проблемам их перевода на армянский язык. Данные стилистические приемы подробно рассматриваются и анализируются в оригинале и в переводе.

Ключевые слова: Синклер Льюис, стилический прием, перевод, средства выражения, лингвостилистический прием.

Narine Zakaryan
YSU

**Stylistic Devices in Sinclair Lewis' Works
and the Problems of Their Translation into Armenian**

The article is devoted to the most common stylistic devices used by the American writer, a representative of critical realism Sinclair Lewis and the problems of their translation into Armenian. The examples in question are studied and analyzed in detail, drawing parallels between the ST and TT.

Key words: Sinclair Lewis, stylistic device, translation variant, means of expression, linguostylistic device.